ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
05.04.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅ ՄԱՅՐԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՀԱՅ ՄԱՅՐԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն	02614412
1.3 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱՋԱՓՆՅԱԿ ԱՋԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ Հալաբյան 59 տար. 40
1.4 Պետական գրանցման համարը	211.171.746912
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2012-12-26
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)91418835
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.haymayrer.am
1.8 Էլեկտրոնային փոստը	lenmark.llc@mail.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝	

Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՆԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ	ՄԱՆՈՒԿՅԱՆ	տնօրեն

3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը
Գլխուղեղի տարբատեսակ վնասվածքների հետևանքով առաջացած ֆիզիկական սահմանափակումներով երեխաների մայրերին օժանդակելը
ՀՀ ամբողջ տաածքում գործող վերականգնողական ծառայություններ մատուցող կենտրոնների մասին ինֆորմացիայի տրամադրում նույն խմբի երեխաների մայրերին
Գլխուղեղի վնասվածք ունեցող հաշմանդամ երեխաների և նրանց երեխաների իրավունքների պաշտպանություն
Նույն խմբի հաշմանդամ երեխաների ֆինանսական օժանդակության տրամադրում
Նույն խմբի հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման գործընթացի անվճար ապահովում, 6. տարբատեսակ
սոցիալապես անապահով երեխաների ժամանցային և առողջարարական միջոցառումների կազմակերպում
իր նպատակների իրականացմահամար կազմակերպել դասընթացներ, գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ
սույն նպատակներից բխող, և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն

4 Հասարակական կազմակերպության՝	
4.1 Անդամների թիվը	3
4.2 Կամավորների թիվը	
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	6

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Մասնագիտություն խոցելի կանանց	ք. Արարատ	Սովորեցնել 8 կանանց մատնահարդարում Սովորեցնել 8 կանանց դերձակություն	Ընթացքի մեջ
2	Երազի տուն 2	ք. Երևան	Բարելավել մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների ու նրանց ընտանիքների կյանքի որակը	Ընթացքի մեջ
3	Հաշմանդամություն ունեցող անապահով երեխաների ֆինանսական և հոգեբանական աջակցություն	ք. Երևան	Հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական բուժում, սայլակների և կանգնակների ձեռքբերում,ֆինանսական աջակցություն	Ավարտված

4	Հանուն կյանքի	ք. Երևան	Արցախից անտուն մնացած ընտանիքների կանանց տրամադրել արդիական մասնագիտություններ և աշխատանքի համար անհրաժեշտ գործիքներ	Ավարտված
5	Շահերի պաշտպանության ռազմավարություն	ք. Երևան	72 անձանց ներառական զբաղվածությանը վերաբերող շահերի պաշտպանություն	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	ՀՀ Առողջապահության նախարարություն-պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին	ք. Երևան	Ավարտված	բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում	Երեխաների առողջական վիճակի հնարավոր բարելավում ,որոշ դեպքերում վատթարացումների կանխարգելում ,ցավերի , ոսկրամկանային դեֆորմացիաների նվազեցում, քայլքի բարելավում և այլն

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	90,896,618
8.2 Գույքը	
Ընդամենը	90,896,618

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	5,643,000	ՀՀ Առողջապահության նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	5,643,000	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	81,210,628
10.2 Գույքը	
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը	81,210,628

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	5,643,000
11.2 Գույքը	
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը	5,643,000

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____3_____ էջից

էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Pro Finance
Professional Business Services

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայ Մայրեր» Բարեգործական հասարակական կազմակերպության ղեկավարությանը և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայ Մայրեր» Բարեգործական ՀԿ (այսուհետ՝«Կազմակերպություն») 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Հասարակական Կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերում լրացված տվյալները, ինչպես նաև հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝

- Կից ֆինանսական հաշվետվությունը և ծանոթագրությունները, տալիս են 01 հունվարի 2022թ. մինչև 31 դեկտեմբերի 2022թ. ժամանակաշրջանի ընթացքում ստացված հանրային դրամական միջոցների և գույքի, ինչպես նաև դրանց օգտագործման ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Հասարակական Կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի և ՀՀ ՊԵԿ Նախագահի 2020թ. մայիսի 27-ի թիվ 477-Ն հրամանով սահմանված հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման սկզբունքների:
- Ստացված հանրային միջոցները օգտագործվել են միայն համապատասխան Ծրագրերի նպատակների համար:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Pro Finance
Professional Business Services

Հանգամանքի շեշտադրում. Հաշվապահական հաշվառման հիմունքը և տարածման և օգտագործման սահմանափակումը:

Ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել սույն ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններին, որտեղ նկարագրվում է Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հաշվապահական հաշվառման սկզբունքները: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու Կազմակերպության վերը նշված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխանելու համար: Ուստի ֆինանսական հաշվետվությունները հարմար չեն և չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը նախատեսված է բացառապես ‹‹Հայ Մայրեր›› Բարեգործական Հասարակական Կազմակերպության, ինչպես նաև շնորհ և հանրային միջոցներ տրամադրողների համար: Ուստի հաշվետվությունը չի կարող կիրառվել մեկ այլ նպատակով: Մեր Կարծիքը սույն հանգամանքով պայմանավորված չի ձևափոխվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՀՀ ՊԵԿ Նախագահի կողմից 2020թ. Մայիսի 27-ի թիվ 477-Ն հրամանով հաստատված ‹‹Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության›› պատրաստման համար, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համար, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակարպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրավատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն

Pro Finance
Professional Business Services

ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը:

Digitally signed by SARGSYAN ARMEN 35608530012

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտի առաջադրանքի պատասխանատու՝ Լիլիթ Մայիլյան:

Լիլիթ Մայիլյան

Տնօրեն/առաջադրանքի ղեկավար

«ՊՐՈՖԱՅՆԼԻՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«PROFINANCE» LIMITED LIABILITY COMPANY
«ПРОФИНАНС» ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ
00208593
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA YEREVAN

Պրոֆայնընս ՍՊԸ
Ա. Ավետիսյան 74, տ 24, 0033,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

05 ապրիլի 2023թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 05.04.2023 21:18